Նախագծային աշխատանք

Աջափնյակ համայնքում բնակչության խտության հաշվումը Մարգարյան 2–րդ նրբանցք 3–րդ շենք և Մազմանյան 14 շենքերում:

Հաշվետվություն

Նախագծին մասնակցում են 7–րդ «Բ» դասարանի աշակերտները։ Պատասխանատու դերում հանդես են գալիս աշակերտներ Արեն Գափոյանը և Արթուր Հարութունյանը։
Սովորողների միջոցով ուսումնասիրվել է նշված շենքերի բնակչության թիվը ըստ զբաղեցրած մակերեսի։
Աշխատանքային օրերը եղել են հագեցած և հետաքրքիր։
Ուսուցչուհու ուղղորդմամբ ուսումնասիրել են Մարգարյան 2–րդ նրբանցք 3–րդ և Մազմանյան 14–րդ շենքերը։ Կիրառելով մաթեմատիկական հմտությունները հաշվարկվել է 1,2,3,4 սենյականոց բնակարանների զբաղեցրած մակերեսները, բնակվող,բնակիչների տղամարդ,կին երեխա քանկը։ Աշխատանքը կատարելիս օգտվել են տան սեփականության հատակագծերից,ինչը զարգացրել է նրանց գծագրի միջոցով հաշվարկներ կատարելու հմտությունը։ Տեղեկատվական փոքրիկ տեսաֆիլմերի նկարահանումը նպաստել է մեդիասարքերի նպատակային գործածման հմտության զարգացմանը։ Աշխատելիս որոշակի օգնություն են ստացել շենքերի սոցիալական աշխատողներից՝ զարգացնելով շփման և կառուցողական հաղորդակցման հմտությունները։
Նախագծի շուրջ հետաքրքրության առաջացումից և դերային բաշխումից հետո տրվեց նախագծի ընթացքի մեկնարկը։
Նախագծի ուսումնասիրման ընթացքը սկսվել է այսպես.յուրաքանչուր աշակերտ, իր ընկերներից որևէ մեկի հետ այցելել են նշված շենքերի բնակարարները,գրանցել են S մակերեսի և բնակիչների **n** թվի քանակը,հետո հաշվել են բնակչության խտությունը ։ Կազմել են համապատասխան հիստոգրամներ,պաստառներ։Պատրաստել են թեմայի ներկայացման սահիկահանդես։

Նախագծի նպատակը ՝ Հաշվել նշված շենքերում բնակիչների խտությունը։ Սովորողների մոտ առաջացնել ստեղծագործական կարողություն և տրամաբանական մտածողության զարգացում։

Արժեհամակարգ՝ Մեծացնել սերը մաթեմատիկայի նկատմամբ,արժեվորել նրա դերը առօրյա կյանքում։

Հմտություն՝ Սովորողների մեջ սերմանել թիմային և ինքնուրույն աշխատանքի հմտություն։

Կարողություն՝ Սովորողների կողմից տվյալների հավաքագրման հաշվառում, համապատասխան հիստոգրամի կառուցում։

Նախագծային խնդիրները

Իմանալ մաթեմատիկայի դերի կարևորությունը ամենօրյա կյանքում, կապը տարբեր բնագավառների հետ։

Նախագծային աշխատանքի փուլերը

1-Սովորողների միջև կատարվել է աշխատանքի բաժանում , նախագծի ղեկավարի ուղղորդմամբ գրանցվել են արդյունքին համապատասխան պահանջները

2- Տարբեր սենյակների մակերեսների և բնակչության քանկաի մասին հավաքագրված տվյալները վերադասավորել է, խմբավորվել է ըստ նշագրման. շենքում 1 սենյականոց (2,3,4) քանի բնակարան կա ,ինչպես նաև քանի բնակիչ կա յուրաքանչյուր բնակարանում, նաև քանի տղամարդ, կին , երեխա կա։ Կազմվել է հիստոգրամներ ։

3-Կատարվել է աշխատանքի վերանայում ,ճշտվել են թերությունները,քննարկվել են այլ առաջարկներ (օրինակ՝ հաշվել հարևան շենքում ապրող Արցախից բռնի տեղահանվածների,ինչպես նաև ազգությամբ հնդիկ բնակչության խտության թիվը)։

Կատարվել են տեսանկարահանումներ ուսումնասիրվող շենքերում,բակում: Սովորողների կողմից պատրաստվել են զեկույցին ուղեկցող փոքևիկ տեսաֆիլմ, սահիկահանդես և պաստառ։ Նախագծի իրագործման ընթացքում սովորողները հանդիպել են նաև դժվարությունների,ինչպիսիք են բնակիչների կողմից իրենց բնակարանի չափումների մերժումը, չբնակեցված բնակարանների փակ դռները։ Նման խնդիրները սովորողներն ինքնուրույն արդյունավետ հաղթահարել են՝ դիմելով շենքերը սպասարկող սոցիալական ծառայողներին և ստանալով անհրաժեշտ

տվյալները: Բանակցելու,կառուցողական շփում ձևավորելու կարողությունը նրանք շարունակաբար զարգացնելով կկիրառեն կյանքում:

Եզրակացության - Նախագծի գաղափարը շատ լավ խթան է ուսումնառության համար:Այն առաջացրեց հետաքրքրության լայն օղակ և հնարավորություն տվեց դիտարկել նմանատիպ խնդիրներ:
Օրինակ՝ Երևան քաղաքում օրական քանի տոննա հաց է սպառվում:
Կամ Հայաստանի տարբեր շրջաններում ինչպիսին է ցորենի, կարտոֆիլի բերքատվությունը:
Նման հարցերի լուծման վերաբերյալ տեղեկատվությունը տալիս է վիճակագրության և հավանականության բաժինը:

Գնահատում – Համապատասխան ռուբրիկով սովորողները գնահատվել են նախագծի իրականացման ողջ ընթացքում՝ պլանավորումից մինչև պաշտպանություն: Հանրագումարում Արեն Գափոյանը և Արթուր Հարությունյանը վաստակել են առավելագույն 10 միավոր:

Նախագծի ղեկավար՝ Ա.Անդրեասյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Աջափնյակ համայնքում բնակչության խտության հաշվումը» նախագծային աշխատանքի ընդունման հանձնաժողով
Համաձայն ուսումնական հաստատության տնօրեն Գ.Մելիք–Ստեփանյանի 16 փետրվար 2024թ.հ. 84–Լ հրամանի սովորողների կողմից իրականացվող աշխատանքի ընդունման հանձնաժողովի

ՈՐՈՇՈՒՄ

Սովորող	դասարան	Գնահատական /ՄԳ/
Արեն Գափոյան	7«Բ»	10
Արթուր Հարությունյան	7«Բ»	10

Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Մելիք–Ստեփանյան
Անդամներ՝
Ուս.աշխ.գծով տնօրենի տեղակալ՝ Գ.Մաղաթյան
Ուսուցիչ՝ Ա.Անդրեասյան

23.02.2024թ.